ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «ՀՊՏՀ շրջանավարտ-2017» հանդիսությանը

Հարգելի գործընկերներ, ներկաներ,
Սիրելի ուսանողներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր և հիշարժան իրադարձության առթիվ: Սա տոն է բոլորիս համար. Ձեզ համար, սիրելի շրջանավարտներ, բարձրագույն կրթություն ստանալու որոշիչ փուլն ավարտելու, իսկ կրթության կազմակերպիչներիս համար՝ մասնագետների հերթական սերունդը թողարկելու համար: Տոն է նաև Ձեզ համար, հարգելի ծնողներ:

Արդեն քանի տասնամյակ՝ մեր համալսարանը թողարկում է մասնագետներ, որոնք իրենց նպաստն են բերում հայրենի տնտեսության, ինչպես նաև տնտեսագիտական մտքի զարգացման գործին՝ ներգրավված լինելով մեր երկրի ամենատարբեր ոլորտներում: Մենք հպարտորեն ենք մատնանշում մեր համալսարանի անվանի շրջանավարտներին, որոնք այսօր պատասխանատու հանձնառություն են ստանձնել թե՛ պետական, թե՛ մասնավոր համակարգում: Նրանք հեղինակավոր գիտնականներ են, մասնագետներ, իրենց գործի գիտակներ, որոնց ներդրումը մեծ է մեր պետության կայացման և առաջընթացի ապահովման գործում:

Մեր ժողովրդի համար բարձրագույն արժեք համարվող կրթությունն այսօր վերափոխումների հորձանուտում է: Համաշխարհային կրթական շուկայում տեղի ունեցող փոփոխությունները, հայաստանյան կրթական համակարգի առջև առկա ներկա մարտահրավերները առաջադրում են նոր խնդիրներ, կրթության որակի և բովանդակության բարելավման միջոցների շտապ և կայուն ներդրում: Բարձրագույն կրթությունը, բնականաբար, անմասն չէ, այն ևս վերափոխումների փուլում է՝ հանրային և պետական քննարկման օրակարգում է նաև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքը: Մեր համալսարանը պատրաստակամ և շահագրգռված է, որ կյանքի կոչվեն այն բոլոր մոտեցումները, որոնք իսկապես կլավարկեն բարձրագույն կրթության որակը, կլուծեն առկա խոչընդոտները:

Սիրելի շրջանավարտներ

Անցնող տարիներին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ղեկավար կազմը, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմը, ներդրել են իրենց բոլոր հնարավոր ջանքերը՝ ձեր ուսումնառությունը բովանդակալից և անմոռաց դարձնելու համար: Հատկապես դուք ականատեսն եք եղել մեր համալսարանում վերջին տարիներին իրագործված բարեփոխումներին, որոնք ուղղված են եղել գործունեության բոլոր ուղղություններին՝ կրթության որակի բարելավումից մինչև համալսարանական միջավայրի արդիականացում: Բոլոր խնդիրները մեր տեսադաշտում են եղել, ինքներդ կարող եք հավաստել, որ իրագործվել են անգամ սոցիալական ծրագրեր՝ ուղղված լավ սովորող ուսանողներին:

Այսօր, երբ դուք ավարտում եք ձեր ուսումը և մուտք գործում մեծ կյանք, ես ցանկանում եմ ձեզ մաղթել լավագույնը՝ առողջություն, անձնական և ընտանեկան երջանկություն, մասնագիտական կայացման ազնիվ և արդյունավետ ճանապարհ: Միևնույն ժամանակ չմոռանաք, որ 21-րդ դարում կրթությունը պահանջում է շարունակականություն, իսկ մասնագիտական կայացումը՝ պարբերական վերապատրաստում:
Բարի երթ ձեզ, սիրելի շրջանավարտներ:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր